ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Գ. Նոյակերտ

30.12.2015թ

հեռ. 077-35-13-95

ՈՐՈՇՈՒՄ N 23

ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 17 ԵՎ 19 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով մարզպետարանից ստացված 15.12.2015թ.-ի թիվ 1/14/6346-15 և 24.12.2015թ.-ի թիվ 1/14/6961-15 գրությունները,ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 –րդ հոդվածի պահանջներով ավագանին .

ՈՐՈՇՈՒՄ Է՝

04.12.2015 թ.-ի թիվ 17 որթշման 1-ին կետի 2-րդ ենթակետի դ/ պարբերության մեջ սահմանվում է բառից հետո <<5000>> թվի փոխարեն կարդալ <<3000>> թիվը:Նույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ տեղական տուրքը սահմանվում է բառերից հետո <<5000>> թվի փոխարեն կարդալ <<3000>> թիվը:Նույն որոշման «Տեղական վճարները» վերնագրի 4 –րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<< Համայնքի տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճար սահմանել ՝

1/ կենցաղային աղբի համար յուրաքանչյուր անձի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 150 դրամ,

2/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար յուրաքանչյուր մեկ մետր խորանարդ աղբի համար՝ 1000 դրամ>>:

11.12.2015 թ.-ի թիվ 19 որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի հաստիքային միավոր <<1>> -ը հանել: Նույն որոշման թիվ 3 հավելվածի թիվ 3 տողի դրույքաչափ սյունակի <<67,0>> –ը կարդալ <<73,0>>, թիվ 6 տողի դրույքաչափ սյունակի <<70,0>> –ը կարդալ <<73,0>>,թիվ 11 տողի դրույքաչափ սյունակի <<67,0>> –ը կարդալ <<73,0>> :

Ավագանու անդամներ՝

1. Ա. Հովհաննիսյան- կողմ
2. Յ. Հարությունյան - կողմ
3. Ա. Ասլանյան - կողմ
4. Ա. Պողոսյան – կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ